

ՀՀ Վայոց ձորի մարզպետն այցելել է հեռագնա արոտավայրեր

04.08.2014



2014 թվականի օգոստոսի 3-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը՝ Կարմրաշենի համայնքի ղեկավար Ղամբար Ղամբարյանի և ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության աշխատակիցների ուղեկցությամբ այցելել է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Կարմրաշենի և Հերհերի վարչական սահմաններում գտնվող հեռագնա արոտավայրեր, որտեղ անասնապահությամբ են զբաղվում հիմնականում ՀՀ Արարատի և Արմավիրի մարզի անասնապահական տնտեսություններ: Այցի ընթացքում քննարկվել են հիշյալ տնտեսությունների և համայնքների միջև առաջացող սահմանային, ինչպես նաև արոտավայրերի վարձակալական պայմանագրերի կնքման հետ կապված խնդիրները: Միաժամանակ անդրադարձ է կատարվել անասնագլխաքանակի սեզոնային փոխադրումների և անասնաբուժական զննության հարցերին: